

ԵԿԵԱԼ Ի ՀՌՕՄ ՎՃԱՐԵԱՑ ԶԿԵ

ԱՆՍ ԻՒՐ Ի ԹՎԻ ՓՐԿՉԻՆ ՌՉԻԹ (= 1729)

Ի (Ն. Տ.) ՅՈՒՆՎԱՐԻ ԺԶ.ԻՆ

Այս խաբլանեան Սարգիս Եպիսկոպոսին ժամանակ Երուսաղեմի միարան եւ Գամասկոսի արքեպիսկոպոսն Ստեփանոս Բերիացի Գունտի ազգատոհմէն, Երուսաղէմ 30 տարի լուսահանութեան պաշտօն վարելէն ետեւ՝ նոյնպէս Անտոնեանց Քրէյմայ վանքը քաշուեցաւ իրր 1727ին, Արծիւեան Աբրահամ Եպիսկոպոսին ձեռքը ուղղափառ դաւանութիւն տուաւ եւ 1737ին 105 տարեկան վախճանելով Անտոնեանց վանքին դամբարանը թաղուեցաւ (Հ. Իս. Սրապեան, «Հանգ. Ա.» 1902, էջ 292, Davidian S., Biografia di Abramo Pietro I, Cairo 1861, p. 68): Մարոնիդներն 1736 Սեպտ. 30ին ի Լիբանան, Լօայիզա վանքին Ս. Աստուածածին Եկեղեցին գաւառական Սիւնհոդոս մը գումարած են, եւ ի մէջ այլոց նաեւ Տրիդենտեան Ժողովոյ վճիռներն ընդունած: Այս Սիւնհոդոսին հրաւիրուած էին նաեւ Աբրահամ Արծիւեան եւ Ստեփանոս Բերիացի Եպիսկոպոսները. սակայն վերջինս ծերութեանը պատճառաւ անձամբ երթալ չկարենալուն՝ իրեն ներկայացուցիչն եղած է Անտոնեան Միարան Հ. Նիկողայոս Ծ. Վ. Միրօյեան, որ Արծիւեանին հետ փոխանորդաբար ստորագրած է Սիւնհոդոսի վճռոյն (Արձանագրութիւնք տպագրուած են ի Հռոմ, Բրոքադանտայի տպարանը, 1820ին):